Այդ բոլորից յետոյ, երբ Մարիային ղրկեցին աքսոր, Իւանը՝ խղճի խայթոցից տանջւելով յայտնեց իշխանութեան իր կատարած եղեռնագործութեան մասին և խնդրեց վերադարձնել անմեղ տեղը տանջւած քրոջը, սակայն նրա զղջումը չունեցաւ բաղձալի հետևանք, Մարիան արդէն մահացած էր ճանապարհին։

*
* *

Այստեղ իմ ուղեկցուհին շտապեց վերջացնել իր պատմւածքը, որովհետև մեր գնացքը մօտենում էր կայարանին, ուր նէ պէտք է իջնէր։ Ես սրտանց շնորհակալութիւն յայտնեցի նէրան՝ իր պատմութեան համար, որ թւաց ինձ այնքան հետաքրքրաշարժ, որ իսկոյն և եթ այնտեղ որոշեցի գրել այն, աշխատելով պահել, որքան հնարաւոր է, նկարագրութեան իսկութիւնը, հասարակ և մի և նոյն ժամանակ պատմողի զգացւած արտայայտութիւնը, որը եղել էր ականատես իր նկարագրած տխուր պատմութեան։

Թրգմ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԷԿ-ՅՈՎՍ.

ՎԵՐՋ

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

ԱԶԴՄԱՆՑ ՄՏԱՑ ԵՒ ՍՐՏԻ

1843

ՓԵՏՐՈՒԱՐ

6

Բանք հպարտք խռովեն զհեզութիւն, որպէս ալիք վերացեալք զվտակս խաղաղականս։

8

Մարմին մարտկոց է հոգւոյ. եթէ տիրեսցէ նմին սատանայ՝ անտի ընդ հոգւոյն մարտնչի, իսկ եթէ հոգի տիրէ նմին՝ յապահովի կայ։

10

Վաղ հասունանան աստուածատունկ բերք, զի շնորհօք հոգւոյն առոգանին։

13

Ո՛ր սիրտ է զոր չբացցեն բանալիք սիրոյ։

16

Համբաւ չար երագ է քան զբարին, զի յամենայն կերպարանս կերպարանի, և ընդ ամենայն շաւիղ գնայ։

17

Հեշտութիւն մինչ չև ի քիմս քաղցրացեալ դառնանայ ի խիղճս։

17

Ամենայն յոյս լուսաւոր է, այլ է որ լապտերաց բանտի նմանէ, պա՞րտ իցէ և զայն յոյս կոչել։

19 *Յերագի*

Մահ յելս կենաց նաւ պատրաստական անցուցանել զհոգի ի կեանս։

19

Կրկին դէմս ցուցանէ մահ, արդարոց զուարթ, մեղաւորաց՝ դժնդակ։

24

Մանգաղ մահուն հնձէ և զզէն և ըզգարդ։

24

Առ կենդանեաւ ոչ է անմահանալ, այլ անմահութեան պտուղ տալ։

24

Ծայրք մատանց զքնարս բանան, և ծայր շրթանց զսիրտս։

25

Աղքատն առ կարօտութեան՝ ճոխն առ յղփութեան չգիտեն ո՛ւր հանգչել, և ի մահուն բարձակիցք լինին։

25

Փարաւոն զմանկտին գետահեղձիկ առնէր. Աստուած զմարտիկս նորա ծովամոյն արար։

20

Մոլորութիւնք որչափ ի վեր ընձիւղին՝ նոյնչափ և ի խոր արմատանան։

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

digitised by A.R.A.R.@